

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու, վերջիններիս աշխատանքներն ու կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կանոնակարգելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների օրնակելի աշխատակարգը, որը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հրամանով: Օրնակելի աշխատակարգը հանդիսանում է որպես ուղեցույց համայնքներում գործող հանձնաժողովների աշխատանքները կազմակերպելու, հանձնաժողովների նիստերի անցկացման ու արձանագրման կարգը սահմանելու և այլ կազմակերպչական հարցեր լուծելու համար:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի առաջարկությամբ՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկված քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում կատարվել են լրացումներ, և պարտականություններ բաժնում ամրագրվել են նոր գործառույթներ, որոնք ուղղված են երեխաների իրավունքների պաշտպանությանը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացվում է վերահսկողություն համայնքներում երեխաների ծնունդ չգրանցելու դեպքերի բացահայտման և գրանցման գործընթացի նկատմամբ:

Նախարարությունը սերտ համագործակցում է երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս կողմից համայնքներում իրականացվել են սոցիալական աշխատողի վերապատրաստման դասընթացներ, որի արդյունքում վերապատրաստվել են 250 համայնքային ծառայողներ: